

Հայաստանի տնտեսության հեռանկարային ոլորտներ և ներդրումային ծրագրեր

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք,

Ինձ համար պատիվ է այսօր այստեղ գտնվել, շնորհակալ եմ հրավերի համար: Ուրախությամբ կխոսեմ Հայաստանի տնտեսության հեռանկարային ոլորտների և ներդրումային ծրագրերի մասին և կփոխանակեմ գաղափարներ ՀՀ-Սփյուռք տնտեսական համագործակցության խթանման վերաբերյալ:

Համոզված եմ, որ միջոցառումն իր արդյունքներով կգոհացնի ներկա բոլոր կողմերին. չէ որ նման ներկայացուցչական միջոցառումները ոչ միայն խթանում են առևտրային և տնտեսական հարաբերությունները, այլ նաև ստեղծում են բարենպաստ պայմաններ՝ ընդլայնելու առկա տնտեսական համագործակցությունը՝ բացահայտելով նոր հնարավորություններ գործարարների համար: Շատ կարևոր է, որ տարբեր ոլորտներ ներկայացնող հայ գործարարները հնարավորություն ունեն ճանաչելու միմյանց:

Հայերն ունեն աշխարհատարած հզոր սփյուռք: Հայաստանում մշակվող տնտեսական քաղաքականության տեսանկյունից սա նշանակում է առաջին հերթին մեծ պատասխանատվություն. օրենսդրության յուրաքանչյուր տարր, յուրաքանչյուր գործընթաց պետք է լինի թափանցիկ, առավելագունս պարզ, հասկանալի և հնարավորինս ընդունելի Հայաստանից դուրս բնակվող հայրենակիցների համար, որպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա մասնակցել իր երկրի տնտեսական զարգացմանը, հաստատել ամուր և վստահելի կապեր տեղական գործարարության հետ:

Այս նպատակը իրականացնելու համար, առաջին հերթին, աշխատում ենք ներդրումային օրենսդրության բարելավման ուղղությամբ: Այդ նպատակով մշակել ենք «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրությունը: Նախագծի բազմաթիվ քննարկումներին սփյուռքահայության ակտիվ մասնակցությունը արդյունքում բերեց օրենքի այնպիսի նոր խմբագրության, որտեղ առաջարկվող մոտեցումներն ու սահմանումները թույլ են տալիս օտարերկրյա, այդ թվում՝ սփյուռքահայ, ներդրողներին օգտվել բարենպաստ ներդրումային ռեժիմներից, միջազգային առաջադեմ փորձին համապատասխանող երաշխիքներից և պաշտպանական մեխանիզմներից:

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Նպաստելով իրենց բնակության երկրների տնտեսությունների բարգավաճմանը՝ աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցները պահպանում են իրենց ինքնությունը՝

դարձնելով հայկական ազգանունները հարգված, իսկ հայերի կողմից ստեղծված արդյունքը՝ ճանաչելի:

Անգնահատելի է հայկական սփյուռքի դերը Հայաստանի զարգացման հետճգնաժամային իրավիճակից վերականգնման և նոր հնարավորությունների ստեղծման տեսանկյունից: Խոսքն այստեղ ոչ միայն դրամական փոխանցումների և բարեգործության, այլ նաև Հայաստանի տնտեսության իրական հատվածում ներդրվող գումարների, սփյուռքի հմտությունների, գիտելիքների և փորձի, կապերի և հեղինակության մասին է, որոնք զգալիորեն նպաստում են Հայաստանի տնտեսական զարգացմանը: Հանրահոջակ համաշխարհային բրենդերից շատերը (HSBC, Marriott, KPMG, Coca-Cola, Synopsis, National Instruments, Microsoft etc.) Հայաստանի շուկան բացահայտել են հենց հայկական սփյուռքի շնորհիվ:

Իհարկե, սա չէր կարող չանդրադառնալ տնտեսության զարգացման միտումների վրա: Այսօր մեր երկրի տնտեսության հենքի կարևորագույն օղակներից են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, մշակող արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, թեթև արդյունաբերությունը:

Հայաստանն այսօր յուրահատուկ տեղ է զբաղեցնում տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային քարտեզի վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից մեկն է: SS ոլորտի գլխավոր կապիտալը մարդկային ռեսուրսն է, որն ապահովում է մտավոր սեփականության ձևավորումն ու հավելյալ արժեքի ստեղծումը: Այս տեսանկյունից չեմ կարող շնորհակալությամբ չհիշատակել Թումո կենտրոնի ստեղծման մասին, որը լավագույն ցատկահարթակ է SS-ում իրենց գտած հայ երիտասարդության համար:

Իր հերթին ՀՀ կառավարությունը SS ոլորտի հետագա զարգացումն ապահովելու և ոլորտի մրցունակությունը բարձրացնելու նպատակով տրամադրում է հարկային արտոնություններ ոլորտի նոր ստեղծվող, սկսնակ ընկերություններին (շահութահարկի 0% և եկամտային հարկի 10% դրույքաչափի կիրառում): Նշված օրենքի կիրարկումը մեծապես խթանում է SS ոլորտում սկսնակ ընկերությունների ձևավորումը և նոր աշխատատեղերի ստեղծումը: Դրա մասին ակնառու վկայում է վիճակագրությունը, համաձայն որի՝ օրենքի կիրարկումից սկսված կարճ ժամանակահատվածում հիմնադրվել և գործարկվել է 230 սկսնակ ընկերություն:

Համաձայն Հայաստանի որդեգրած արդյունաբերական քաղաքականության՝ նախատեսվում է Հայաստանը դարձնել բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր, որի առանցքը կրկին ստեղծագործ մարդկային կապիտալն է: Ներդրումների ներգրավման համար գերակա են արտահանմանը նպատակաուղղված նոր արտադրատեսակ ստեղծող և տեխնոլոգիական վերազինման արդյունքում առավել մրցունակ արտադրանք թողակող

և ծառայություններ մատուցող բոլոր ձեռնարկությունները՝ անկախ դրանց ոլորտային պատկանելիությունից:

Մշակող արդյունաբերությունը սերտորեն փոխկապակցված է գյուղատնտեսության ոլորտի հետ, քանի որ մշակող արդյունաբերության ամենախոշոր ենթաբաժինը սննդի արդյունաբերությունն է: Տնտեսության այս երկու հատվածները խիստ զգայուն են միմյանց նկատմամբ: ՀՀ կառավարությունը Հայաստանում գյուղատնտեսության ապագան տեսնում է որպես մրցունակ և արտահանման ներուժ ունեցող ոլորտ: Հետզհետե ավելի մեծ տարածում է ստանում օրգանական գյուղատնտեսությունը, որի արտադրանքը մեծ պահանջարկ ունի: Հայաստանում կա օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվելու բավականաչափ ներուժ: Նոր թափ է ստանում ջերմոցային գյուղատնտեսությունը:

Գյուղատնտեսությունում արձանագրված աճի տեմպով և արտադրողականությամբ պայմանավորված է նաև մշակող արդյունաբերության զարգացումը: Հայաստանն ունի հազարամյակների ավանդույթներ խմիչքների պատրաստման ոլորտում, ինչը դարձել է Հայաստանի այցեքարտ: Թեև ոլորտը բավականին զարգացած է, սակայն արժեքի ձևավորման շղթաները, տարածաշրջանային ինտեգրումը, նոր տեխնոլոգիաների մշակումը, ռազմավարական պլանավորումը և այլ ծառայությունները դեռ կատարելագործման կարիք ունեն: Միաժամանակ, ճյուղն ունի դեռևս չօգտագործված զգալի ռեսուրս, որի ռացիոնալ օգտագործումը լուրջ արդյունքներ կարող է ապահովել: Այս կապակցությամբ կարծում եմ, որ Հայաստանում «Պեռնո Ռիկար», «Տիեռաս դե Արմենիա» ընկերությունների երկարամյա և հաջողակ փորձը կարող է ոգևորիչ լինել տվյալ ոլորտի այլ ընկերությունների համար՝ դիտարկելու Հայաստանը որպես ներդրումների համար նոր ուղղություն:

ՀՀ ոսկերչության, ադամանդագործության ու ժամագործության ոլորտներն ունեն աճի և հատկապես միջազգային շուկաներում ծավալվելու զգալի ներուժ: Հայաստանում արդեն գործում են մի շարք ընկերություններ, որոնք ստեղծվել են սփյուռքի կապերի միջոցով և հաջողությամբ համագործակցում են արտասահմանյան հայտնի ընկերությունների հետ («Ֆրանկ Մյուլեր Գրուփ», «Ագոսյան Ջուելերս» ՓԲԸ): Այս ոլորտում համագործակցության արդյունավետ հարթակ կարող է դառնալ ոսկերչության, ադամանդագործության ու ժամագործության մեջ մասնագիտացված ազատ տնտեսական գոտին, որտեղ գործունեությունը գրեթե ամբողջությամբ ազատված է հարկերից և մաքսատուրքերից:

Կայուն զարգացող ճյուղերից է դեղագործությունը, և Հայաստանի կառավարությունն առանձնացրել է այն որպես տնտեսության զարգացման առաջնահերթ և հեռանկարային ոլորտ: Հայաստանում արտադրվող դեղերը հաջողությամբ սպառվում են ԱՊՀ և մի շարք այլ երկրներում՝ ձեռք բերելով

վատահոություն և հեղինակություն: Մենք համոզված ենք, որ այս ոլորտը թե՛ արտադրանքի արտահանման ծավալների աճի և թե՛ ներմուծման փոխարինման ուղղությամբ ունի լուրջ ներուժ: Դեղագործական ընկերությունների համար լուրջ խթան կարող է հանդիսանալ ԵԱՏՄ շրջանակներում դեղերի միասնական շուկայի ձևավորումը, որը թույլ է տալիս Հայաստանում արտադրված դեղորայքը առանց հավելյալ հավաստագրումների և թույլտվությունների վաճառել ԵԱՏՄ 180 միլիոնանոց շուկայում:

Հայաստանի մարդկային կապիտալի մասին խոսելիս հնարավոր չէ չհիշատակել նաև ավանդական հայկական հյուրընկալությունը, որն իր կարևոր դերակատարությունն ունի զբոսաշրջության ոլորտի զարգացման համար: Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առաջնահերթ և առավել դինամիկ զարգացող ոլորտներից է, որը արձանագրում է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ՝ արտահայտված ինչպես ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի աշխարհագրության, այնպես էլ հյուրանոցաշինության և այլ ենթակառուցվածքների զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված ներդրումների ցուցանիշներում («ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ», «ՀՈՎՆԱՆՅԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ», «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ):

Վերոնշյալ բոլոր ոլորտներն ունեն զարգացման մեծ ներուժ ու համագործակցության լայն հնարավորություններ, որոնք կյանքի կոչելու համար Հայաստանում ստեղծված են գործարարությամբ զբաղվելու համար եվրոպականին չզիջող, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ ավելի առաջադեմ դաշտ, օրենսդրորեն պաշտպանված և ազատ ներդրումային միջավայր, Հայաստանի ինտեգրացիոն գործընթացների շնորհիվ անընդհատ ընդլայնվող շուկա, ինչպես նաև մի շարք արտոնություններ ներդրողների համար:

ՀՀ կառավարությունն ունի հստակ մոտեցում վերոնշյալ հնարավորությունների իրականացման համար, և ես կուզեի, որ այս հաղորդագրությունը հասնի մեր բոլոր գործընկերներին, այն է՝ ներդրողին ամբողջական աջակցություն: Կուզեի ևս մեկ անգամ շեշտադրել ու վստահեցնել, որ յուրաքանչյուր ներդրումային ծրագրին ցուցաբերվում է ներդրողների կարիքների վրա հիմնված մոտեցում՝ ապահովելով ներդրողներին անհրաժեշտ աջակցություն և արտոնությունների լայն գործիքակազմից առաջարկելով կոնկրետ ներդրողի համար առավել արդյունավետ համախումբը:

Հայաստանում առկա ներդրումային ծրագրերի և հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներդրողներին առավել հասանելի դարձնելու համար գործարկվել է Հայաստանում ներդրումային ծրագրերի էլեկտրոնային հարթակ, որտեղ ներկայումս ներկայացված է շուրջ 56 ծրագիր՝ 2,8 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Էլեկտրոնային հարթակը հասանելի է investmentprojects.am հասցեով:

Հայաստանում արտադրված արտադրանքի համար հասանելի են ԵԱՏՄ անդամ պետությունների շուկաները (որոնց հետ ունենք անմաքս առևտրի հնարավորություն) և Միջին Արևելքի երկրների՝ ԱՄԷ, Քուվեյթի, Քաթարի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի, Իրանի շուկաները: Ի դեպ, Իրանի հետ սահմանակից գոտում շուտով կունենանք ևս մեկ, հարկերից զրեթե ամբողջությամբ ազատված ազատ տնտեսական գոտի՝ թույլատրված գործունեության տեսակների բավականին լայն ընդգրկվածությամբ:

Այս տեսանկյունից մյուս կարևոր և գերակա ուղղություններից է մասնագիտացված արտահանող կառույցների, այդ թվում լոգիստիկ կազմակերպությունների ձևավորումը: Պետք է խոստովանել, որ միջազգային մրցակցության ուժեղացման պայմաններում արտահանման ոլորտում մրցունակության բարձրացման ռեզերվները սահմանափակ են: Նոր մրցակցային առավելությունների որոնումը հանգեցնում է լոգիստիկ համակարգերի զարգացման և արդյունավետ գործունեության անհրաժեշտությանը: Վերջիններիս գործունեությունը կապահովի համապատասխան ոլորտներում գործող փոքր ու միջին կազմակերպությունների արտադրանքի իրացումը արտերկրում՝ այդ թվում մեծածավալ ցանցերին մատակարարելով անհրաժեշտ ծավալի և համապատասխան որակի արտադրանք:

Հարգելի գործընկերներ,

Ավարտելով խոսքս՝ բոլորիս մաղթում եմ հաջողություն և արգասավոր գործունեություն, ոչ միայն այն պատճառով, որ ես ցանկանում եմ, որպեսզի թե տեղական, թե սփյուռքի հայ գործարարները մեծ շահույթներ ստանան, այլ որովհետև առանց միմյանց հետ տնտեսական կապերի ամրապնդման, առանց բիզնեսմենների և նրանց բիզնեսի կայացման անհնար է լուծել մեր առջև դրված նպատակները: Վստահ եմ, որ այս հանդիպումը մեծապես կխթանի բիզնես գործընկերության ամրապնդմանը՝ բացահայտելով նոր ուղիներ երկկողմ փոխշահավետ համագործակցության համար:

Շնորհակալություն:

Հովհաննես Ազիզյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ